

**ՎԼԱՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆ - ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐԵՄԼԻՆԻ ՄԷՋ**

Վլատիմիր Փոութին երկն կրեմլինի մէջ ընդունեց նախագահ Ռոպերթ Քոչարեանը: Ռուսիոյ նախագահը ակնկալած է, որ Ռուսիա եւ Հայաստան «կը յաջողին յառաջ ընթանալ բազմաթիւ հարցերու մէջ»: Ան վստահութիւն յայտնած է, որ Քոչարեանի այցելութիւնը «միայն դրական» պիտի ըլլայ:

Իր կարգին, նախագահ Քոչարեան դիտել տուած է, թէ Ռուսիա եւ Հայաստան յաջողած են լուծել բազմաթիւ բարդ հարցեր, «կան նոր, հետաքրքրական դրոշմներ, որոնք մանրամասն քննարկման կարիք ունին»:

**ՎԵՐՁԻՆ ԺԱՍ** — **ՎԵՐՁԻՆ ԺԱՍ**

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴԱՆԱԻԵՐ ՌՄԲԱԿՈՇԵՑԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԸ

Պատկերասփիռի «Մուսաբաբալ» կայանը հաղորդեց, որ այսօր առաւօտեան ժամը 1:30ին, իսրայէլեան ուղղաթիւններ ուղարկուեցին հարաւային Լիբանանի Հուլիա գիւղը, սպաննելով լիբանանցի մանուկ մը եւ ծանրօրէն վիրաւորելով անոր պատանի եղբայրը:

Իսրայէլեան իշխանութիւնները կոչ ուղղեցին հիւսիսային Իսրայէլի իրենց բնակիչներուն՝ ուղղուիլ ապաստանարանները, առ ի կանխապզուշուրիւն:

Միւս կողմէ, ԱՅՓ լրատու գործակալութիւնը երէկ գիշեր հաղորդեց, որ լիբանանեւիսրայէլեան սահմանին մօտ իսրայէլեան պիւնտրներ կրակ բացած են դէպի Բֆարքիլա եւ Ատայեթ գիւղերը: Օրոպիւս մը թէթետօրէն վնասուած է, սակայն վիրաւորներ չկան: Գործակալութիւնը կ'աւելցնէ, որ լիբանանեան կողմէն եւս կրակոց եղած է, որուն հետեւանքով վիրաւորուած է իսրայէլացի պիւնտր մը: Ըստ իսրայէլեան պատկերասփիռի՝ սպաննուած է նաեւ իսրայէլացի մը:

### ՊԸՐՐԻ ԵՒ ԼԸ ԲՈՒՐԹԻԷ ՀԱՄԱՉԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԾՈՒՐՁ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Յիլիփ լը Քուրթիէն, որ Պըրրիի փոխանցեց Փարիզ այցելութեան իրաւեր մը՝ Տերակոյտի նախագահ Քրիսթիան Փոնտրիի կողմէ:

Լը Քուրթիէ ըսաւ, որ քննարկուած է նաեւ Սուրիոյ վրայ իսրայէլեան յարձակումը:

Ֆրանսայի դեսպանը խստի դատապարտեց արարքը, նշելով, որ արդէն իսկ Ֆրանսա մասնակցած է ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի արտակարգ ժողովին՝ շրջանին մէջ յարուածութիւնը, բախումներն ու բռնարարները նուազեցնելու նպատակով:

Քննարկուած է նաեւ Իրաքի կացութիւնը, որուն շուրջ Պըրրի եւ Լը Քուրթիէ համաձայն գտնուած են, թէ Իրաքի քաղաքականութիւնը պետք է ըլլայ Ֆրանսայի պատկերացումով, այսինքն՝ Իրաք վերստանայ իր գերիշխանութիւնը:

### Հ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՍԻՏԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՄ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆՉԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ հեպեւեալ հաղորդագրութիւնը լղեց լիբանանեան մամուլին:

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն խստի կը դատապարտէ իսրայէլեան վտանգաւոր յարձակումը Լիբանան-Սուրիա սահմանին մօտ՝ պաղեստինեան գաղթականներուն վրայ եւ կոչ կ'ուղղէ միջազգային ընտանիքին՝ սանձել իսրայէլը եւ դատապարտել անոր ահաբեկչական արարքները:

Իսրայէլի այս յարձակումը կ'անցնի բոլոր կարմիր գիծերը, ինչպէս նաեւ փորձ մըն է շրջանին մէջ խաղաքարտերը խառնելու եւ շրջանը ներքաշելու պայթումի մը մէջ, յատկապէս Շարունի ահաբեկչական քաղաքականութեան ձախողութենէն ետք: Այս յարձակումը նաեւ ցուցանիչ է, որ Իսրայէլ կը մերժէ խաղաղութեան գործընթացը:

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կը պահանջէ Սուրիոյ եւ անոր պայքարող նախագահին՝ Պաշար Ասատի:

Սուրիոյ դէմ որեւէ յարձակում ուղղուած է Լիբանանի եւ արաբական բոլոր պետութիւններուն: Այս պայմաններուն մէջ կը պահանջուի շարքերու ամբապնդում եւ միասնականութիւն, որպէսզի կարելի ըլլայ դիմագրաւել հետպահեալ սաստկացող ճնշումը՝ Լիբանանի եւ Սուրիոյ վրայ, ինչպէս նաեւ անհրաժեշտ է բոլոր մակարդակներու վրայ ամբողջական համակարգում, որպէսզի կարելի ըլլայ ձախուղեցնել երկու երկիրներուն ապահովութիւնը եւ կայունութիւնը խանգարելու միտող սիոնական ծրագիրները:

**ՍՈՒՐԻՈՅ ԲՈՂՈՔԸ՝ ՄԱԿԻ, ՍՐԴԻԵՆԵ ՊԻՏԻ ՏԱՅՅ**

### ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ՄՏԱՇՈՂ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ

Սուրիոյ դէմ իսրայէլեան յարձակումը երէկ շարունակեց մտահոգութիւն պատճառել յատկապէս շրջանային երկիրներուն, ուր դատապարտումի յայտարարութիւնները թափ ստացան:

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ խորհրդակցեցաւ սուրիացի պաշտօնակիցին՝ Պաշար Ասատի հետ, քննարկելու համար Դամասկոսի առած դիւանագիտական քայլերը, որոնց նպատակն է փաստել, որ Իսրայէլ ստած է յայտարարելով, թէ ուղարկուած վայրը պաղեստինցի արմատական զինեալներ մարտկելու կեդրոն էր: Մուպարաբ Ասատի ըսաւ, որ Եգիպտոս կը դատապարտէ Սուրիոյ դէմ յարձակումը եւ պահանջ կը կանգնի արաբական եղբայր երկիրին:

Դիւանագիտական գետնի վրայ Սուրիա ՄԱԿի Ապահովութեան խորհուրդէն պահանջած է դատապարտել իսրայէլեան յարձակումը եւ կանխարգիլել անոր կրկնութիւնը: Սուրիա ընտրած է դիւանագիտութիւնը՝ ճակատումի փոխարէն: Մեկնաբաններ դիտել կու տան, որ Սուրիոյ դիմումը Ապահովութեան խորհուրդին՝ ապարդիւն պիտի ըլլայ, որովհետեւ վեթոյի իրաւունք ունեցող Ռուսիայի կողմէ պիտի չարտօնէ Իսրայէլը դատապարտող բանաձեւ մը:

Սուրիացի պաշտօնատար մը ըսաւ, որ Դամասկոս կը պահանջէ, որ Ռուսիայի կողմէ դատապարտել յարձակումը՝ ցոյց տալու համար, թէ իսկապէս մտահոգ է շրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու հարցով:

Արտաքին գործոց նախարարութիւնը իր կարգին երէկ հանդիպումներու իրաւիքեց Ապահովութեան խորհուրդի մնայուն անդամ հինգ երկիրներու դեսպաններ՝ անոնց բացատրելու համար Սուրիոյ կեցուածքը եւ համոզելու, որ պարզապէս կանգնի Դամասկոսի կեցուածքին: Սուրիա բանաձեւի առաջարկ մը ներկայացուցած է Ապահովութեան խորհուրդին՝ պահանջելով դատապարտումը իսրայէլեան արարքին: ՄԱԿի մէջ ամերիկացի դեսպանը՝ ձոն Նեկրոֆոնթ, սակայն յայտնեց, որ Ռուսիայի կողմէն այս հանգրուանին անհրաժեշտ չի նկատուի ՄԱԿի բանաձեւ մը:

Սուրիա իր կեցուածքը կը պաշտպանէ դիտել տալով, որ իսրայէլեան արարքը կը սպառնայ ամբողջ շրջանին, որուն կայունութիւնը կրնայ խախտուիլ եւ յարուածութիւնը հրահրուիլ: Դամասկոս կը պնդէ նաեւ, որ խաղաղութիւն կ'ուզէ, որ չի կրնար իրագործուիլ, եթէ Իսրայէլ կրկնէ այսպիսի արարքներ:

### ՄՏԻՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՂԵՄՏԻՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ ԿԸ ԳՈՒՄԱՐԸ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Ստիպողական վիճակի պաղեստինեան կառավարութիւնը, չոր կ'առաջնորդէ վարչապետ Ահմէտ Քորէյ, այսօր պիտի գումարէ իր առաջին նիստը Ռամալլայի մէջ: Գլխաւոր բանազրնաց Սաէպ Ռալաքար ըսաւ, որ կառավարութիւնը պիտի քննարկէ Կապալի եւ Այսրյորդանանի իրավիճակը:



Ահմէտ Քորէյ

Իր համար Հայֆայի անձնասպանական գործողութեան լոյսին տակ: Կը նախատեսուի, որ ժամանակաւոր կառավարութիւնը արտօնութիւն տայ ապահովութեան ուժերուն՝ ձեռքարկելու արմատական շարժումներու պիտի իշխէ մէկ ամսուան համար: Արաֆատ ստիպողական վիճակի կառավարութիւնը հաստատեց արմատական շարժումներուն դէմ յայնսօր արշաւի մը դիմաց:

### Հ. Յ. Գ. ԲԻՐՈՅԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԲԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԵՐԵՎԱՆ (Հ. Յ. Գ. ՄԱՍԼՈՅ ԴԻՒԱՆ, 6 ՀՈՎՏԵՄԲԵՐ 2003).- Հոկտեմբեր 6ին, Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ «Համաշխարհային Հայկական Կազմակերպութեան» հիմնադիր ժողովի բացման պաշտօնակարգի նիստը, որուն կը մասնակցէին Հայաստանի եւ Ռուսիոյ նախագահները եւ բազմաթիւ իրաւիքային: Հրահրեալներու շարքին էր Հ. Յ. Գ. Բիրոյի պատուիրակութիւնը:

Հ. Յ. Գ. Բիրոյի ողջոյնի խօսքը փոխանցեց ընկ. Ոստանիկ Մարուխեան: Ստորեւ խօսքը.

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիրոյի անունից ողջունում ենք Համաշխարհային Հայկական Կազմակերպութեան ստեղծումը եւ յայտնում մեր ամբողջական պատրաստակամութիւնը համագործակցելու նրա հետ, փոխադարձ համաձայնուած հարցերի ուղղութեամբ:

Ողջունում են առանձնապաշտով կարեւորում ենք այն բոլոր նախաձեռնութիւնները, որոնք հայութիւնը առաւել եւս համախմբելու եւ կազմաւորելու նպատակ են հետապնդում: Որովհետեւ, համախմբելով եւ կերպելու նպատակ են կարողանանք հայութեան ամբողջ կարողականութիւնը եւ կօր ներումը ուղղորդել մեր համազգային հիմնախնկանութիւնը եւ կօր ներումը ուղղորդել մեր համազգային հիմնախնկանութիւնը, որոնց շուրջ պետք է կարելի է հասնել համախոհութեան:

**ՀԱՅԱՃԵԱՐԸ** — **ՀԱՅԱՃԵԱՐԸ**

### ԹՈՒՐԲԻՈՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃԱՆՉՆԱԼՈՒ ՀԱՐՑ ԶԷ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԱԾ ԻՆՏԻ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Երեւանի մէջ երէկ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ «հայ-թրքական սահմանի բացումը մօտաւոր համարելու որեւէ հիմք ներկայիս չկայ, սակայն բնական է, որ հարցը երկուստեք հետաքրքրութեան առարկայ դառնայ»:

Օսկանեանի կարծիքով, հայ-թրքական սահմանի բացումը Հայաստանի համար ինքնանպատակ չէ: «Հայաստանի տնտեսական պարագայն ծրագրող որեւէ ձեռք չ'առնէր իր սահմաններու բացման», ըսաւ նախարար Օսկանեան եւ նշեց, որ սահմաններու բացումը թէեւ տնտեսական նոր պարկ կ'արձանագրէ, սակայն ներկայ վիճակին պահպանումը ճգնաժամ չէ Հայաստանի համար, աւելցնելով, որ իր թուրք պաշտօնակիցը լաւ կը հասկնայ այդ իրողութիւնը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար տեղեկացուց, որ իր թուրք պաշտօնակիցին հետ Մեպտեմբեր 25ին Նիւ Եորքի մէջ կայացած երկրորդ հանդիպման ընթացքին կարեւոր նկատուած է երկխօսութիւնը, քննարկուած են երկկողմանի յարաբերութիւններու կարգաւորման հնարաւորութիւնները:

### ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԷ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԱՐՆԿԻՆ...

Երոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի վերջերս կայացած ժողովի ժիրէն ներս հանդիպում մը տեղի ունեցած է Հայաստանի Ազգային Ժողովի պատուիրակութեան եւ Թուրքիոյ խորհրդարանական պատուիրակութեան ղեկավարներուն միջեւ:

Հայկական պատուիրակութեան ղեկավար, Ազգային Ժողովի փոխ նախագահ Տիգրան Թորոսեան երէկ լրագրողներու հետ հանդիպման ընթացքին նշեց, որ շարք մը հարցերու մէջ թուրք խորհրդարանական համակարծիք եղած է եւ երկու կողմերուն տեսակետները կը համընկնին: Ըստ Թորոսեանի, յատկապէս նշուած է, որ «անցեալը երբեք պիտի չէ մոռցնուի, դրականը պետք է պահուի ու վագուի, իսկ բացասա-

### ԿԼԵՆՏԷՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ Կ'ԱՅՑԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Քալիֆորնիոյ (Մ. Ն.) Կլենտէյլ քաղաքէն պատուիրակութիւն մը, քաղաքապետ Ֆրէնք Քուէքթերնի գլխաւորութեամբ երեք օրէ ի վեր կը գտնուի Հայաստան:

Երէկ, քաղաքապետը տուաւ մամուլի ասուլիս մը, որուն բացումը կատարեց Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ ընկ. Գեղամ Մանուկեան: Քուէքթերնն նշեց, որ Կլենտէյլ քաղաքը ունի կարեւոր ներուժ, որ տեղուին հայ համայնքն է: Իր կարգին, Կլենտէյլի նախկին քաղաքապետ Րաֆֆի Մանուկեան շեշտեց Հայաստանի մէջ արձանագրուած բարգաւաճման կարեւորութիւնը: Նշուեցաւ, որ բազմակողմանի գործակցութիւն պիտի հաստատուի Կլենտէյլի եւ Կապալի միջեւ:

Կլենտէյլի պատուիրակութիւնը երէկ հանդիպում ունեցած էր նաեւ Հայաստանի ընկերային ապահովութեան նախարար ընկ. Աղուն Վարդանեանի եւ տարածքային կառավարման նախարար Յովիկ Աբրահամեանի հետ:

Պատուիրակութիւնը Հայաստան ժամանած էր Հոկտեմբեր 4ին, այցելութեան հիմնական նպատակ ունենալով պարգացնել համագործակցութիւնը անցեալ տարի քոյր քաղաքներ հռչակուած Կապալի եւ Կլենտէյլի միջեւ: Պատուիրակութիւնը, որ նախանցեալ օր այցելած էր Ծիծեռնակաբերդ եւ յարգանքի տուրք մատուցած էր Հայկական Յեղափոխութեան պիտիւն յիշատակին, պիտի այցելէ նաեւ Արցախ:

### «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»Ի ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԱԿԱՆԱՀԱՐՈՒԱԾ

Սեպտեմբեր 3ին ակնաստիպուած է «Վերածնունդ» կուսակցութեան Արեւմտեան վրաստանի գրասենեակը: Չոհրէ կամ վիրաւորներ չեն արձանագրուած: Անձամօքներ ձեռնառումը մը նետու են գրասենեակին վրայ: Կուսակցութեան ներկայացուցիչն համաձայն, վերջին երեք ամիսներուն ընթացքին արկիւլ էրրորդ յարձակումն է կուսակցութեան գրասենեակներուն վրայ: Սեպտեմբերի ակնաստիպուած էր կուսակցութեան Թիֆլիսի գրասենեակներուն մէկը:

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԲՈՂՈՔԻ ԱԼԻՔԸ ԿԸ ԾԱԲԱԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ

Սուրիոյ վրայ կատարուած իսրայէլեան ուժեղացումներուն գծով դատաւարտումի ալիքը ծաւալեցաւ երէկ եւ ընդգրկեց քաղաքական բազմաթիւ կազմակերպութիւններ եւ անձնաւորութիւններ:

Լիբանանեան կուսակցութիւններու համախմբումը գումարեց արտակարգ նիստ մը եւ խստի դատաւարտեց արարքը: Ներկայ էր նաեւ Հ. Յ. Դ. Ի ներկայացուցիչը:

Ստորեւ՝ իսրայէլեան բռնարարները դատաւարտող քաղաքական անձնաւորութիւններէ կազմակերպութիւնները:

Նախարարներ՝ Մարուան Համատէ, Մահմուտ Համմուտ, Ալի Հասան Խալիլ, Անէմ Բանու, Միշէլ Մուսա, երեսփոխաններ՝ Քապալան Խալիլ, Ղապի Չապաթէր, Մոհամէտ Քապալանի, Աթէֆ Մաժտալանի, Ատնան Արաքժի, Մոհամէտ Տալլուլ, Ալի Խալիլ, Ատնան Թրապուլ-Աի, Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտուն, Ինչպէս նաեւ Ամալ շարժումը, Նասրական շարժումը, Ազգային Կուսակցութիւնը, ժողովրդավարական Կուսակցութիւնը:

### ՄԵՔՍԻՔԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ԱՅՑԵԼԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐՈՒՆ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց մեքսիքական պատուիրակութիւն մը, ներկայութեամբ Մեքսիքայի մէջ Լիբանանի դեսպան Նուհատ Մահմուտի եւ Լիբանանի մէջ Մեքսիքայի դեսպան Արթուրո Պոնտի:

Քննարկուեցան լիբանանեան մեքսիքական երկկողմանի յարաբերութիւնները, շեշտելով ընկերային եւ մշակութային մարզերու բարգաւաճման համար գործակցութեան ընդլայնման անհրաժեշտութիւնը:

Նախագահ Լահուտ դրուատեց Մեքսիքայի մէջ լիբանանեան համայնքային դերակատարութիւնը:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ արտերկրի լիբանանցիներու բազմացումը Լիբանանի սահմանները ընդարձակեց, զայն վերածելով գործակցութեան եւ ճառագայտող հողի:

Նախագահ Լահուտ յայտնեց նաեւ, որ արտերկրի լիբանանցիները Լիբանանին պատիւ կը բերեն եւ Լիբանան միշտ կրնայ հպարտանայ իր պատկանելով, որոնք վարկ վայելող քաղաքացիներ եղած են եւ օժանդակած են նաեւ օտար երկիրներու բարգաւաճման, յատկապէս տնտեսութեան, բժշկութեան եւ աշխատանքի մարզերէն ներս:

Պատուիրակութեան անունով խօսք առաւ Անթուան Շրտրաուի եպիսկոպոսը, որ ըսաւ, թէ Մեքսիքայի լիբանանեան համայնքը կը հաւատայ Լիբանանի փայլուն ապագային եւ միշտ կը զօրակցի անոր:

Պատուիրակութիւնը այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԼԻԱՍ ՍԵՐԸ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ վարչապետարանին մէջ ընդունեց ներքին գործոց նախարար Էլիաս Սերը, որուն հետ քննարկեց երկրի նախաձեռնութեան անհրաժեշտ հարցեր:

Վարչապետ Հարիրիի այցելեց նաեւ վերտէսի վաճառատուներու սեփականատէրերու միութեան մէկ պատուիրակութիւնը՝ նախագահութեամբ Օմար Ուաժիի Խաթիպի, հանրօգուտ շինութեանց եւ փոխարդարութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթիի՝ ընկերակցութեամբ լիբանանեան սիրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Խասրի Խուրիի, ճարտարարեստի նախարար Էլիաս Սրաֆի, երեսփոխան Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտունի, Ինչպէս նաեւ Պէյրութի նահանգապետ Եագուպ Սարրաֆի, ներկայութեամբ վարչապետ Հարիրիի բարգաւաճման հարցերու խորհրդական Ֆատի Ֆուայի:

### ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգային վարժարաններու առաքելութեան իրերայաջորդ սերունդներու հայեցի դաստիարակութիւն, բարոյական արժեքներ եւ կրթութիւնը ջանքերու անփոխարինելի դերակատարութեան խորագրով գիտակից, հայ աշակերտին քայլերը ամրապնդելու նպատակով տարի մը առաջ հիմնուած «Սեպուհ Շահպատեան» կրթական Ֆոնտը 2003 - 2004 կրթական տարեշրջանին նաեւ պիտի շարունակէ իր գործունէութիւնը՝ կրթական պատկանելի լիցենզիայով Ազգային վարժարաններ յաճախող աշակերտներու:

Ուրախութեամբ կը յայտնենք, որ «Սեպուհ Շահպատեան» կրթական Ֆոնտին օգտուելի փափաքող ծնողները կրնան ներկայանալ Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարան, Ուսումնական Խորհուրդի Ընկերային Ծառայութեան գրասենեակ, Չորեքշաբթի, 8 Հոկտեմբերէն մինչեւ 17 Հոկտեմբեր, առաւօտեան ժամը 10:00էն 13:00:

Վստահ ենք, որ «Սեպուհ Շահպատեան» կրթական Ֆոնտի վերահաստատումը խորապէս պիտի գնահատուի Ազգային վարժարաններու ծնողներուն կողմէ:

«ՍԵՊՈՒՀ ՇԱՀՊԱՏԵԱՆ»  
ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ

### ՏԸ ՄԻՍԹՈՒՐԱ ԿԸ ԴԱՏԱ ՊԱՐՏԷ ԻՍՐԱՅԷԼԸ

Փոխան արտաքին գործոց նախարար Օպէյտի (երկրէն թափաքալ), տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա երէկ ընդունեց հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի ներկայացուցիչ Սթեֆան տը Միսթուրան, որ դատաւարտեց իսրայէլի կողմէ Սուրիոյ ուժեղացումը:

Սըմահա շեշտեց, որ իսրայէլի կողմէ Սուրիոյ դէմ գործադրուած բռնարարները կ'ապացուցեն, թէ իսրայէլեան բռնարարներու ծիրը ընդարձակուած է: Ան դատաւարտեց իսրայէլը՝ Սուրիոյ հետ 1974ին ստորագրած սահմանափակ համաձայնագրի խախտումը: Օպէյտ, դիտել տուաւ, որ իսրայէլ խախտած է Լիբանանի հետ սահմանափակ իր «Կապուտ Գիծը», ինչպէս նաեւ ուժեղացած Սուրիան «ինչ որ շրջանը վտանգներու փոթորիկի մը մէջ կը մխրձէ: Ճիշդ այս պատճառով, Սուրիան ընտրեց ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի ճամբան, հետեւելով միջազգային օրէնքներու գործադրութեան հրամայականին»:

Տը Միսթուրա դրուատեց ՄԱԿի նկատմամբ Լիբանանի եւ Սուրիոյ ցուցաբերած վստահութիւնը: Ան ակնարկեց, որ Անան քաջ գիտէ եւ կը հասկնայ, թէ Միշէլ Արեւելքի տագնապը կրնայ աւելի եւս սաստկանալ եւ սպառնալ ամբողջ շրջանին ապահովութեան ու կայունութեան: Ան յոյս յայտնեց, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը կը յաջողի Իսրայէլի վրայ ճնշում բանեցնել՝ զայն ետ մղելով այլ բռնարարներէ:

Տը Միսթուրա դրուատեց ՄԱԿի նկատմամբ Լիբանանի եւ Սուրիոյ ցուցաբերած վստահութիւնը: Ան ակնարկեց, որ Անան քաջ գիտէ եւ կը հասկնայ, թէ Միշէլ Արեւելքի տագնապը կրնայ աւելի եւս սաստկանալ եւ սպառնալ ամբողջ շրջանին ապահովութեան ու կայունութեան: Ան յոյս յայտնեց, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը կը յաջողի Իսրայէլի վրայ ճնշում բանեցնել՝ զայն ետ մղելով այլ բռնարարներէ:

### ԹՈՒՐԲԻՈՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ...

Շարունակուած Ա. էջէն

Նախարար վերապահ մնաց սահմաններու բացման համար Անգարայի կողմէ ներկայացուցող պահանջին անհրաժեշտ տեղեկութիւններուն մասին մեկնաբանութիւններ կատարելով: «Թուրքիոյ սահմանները ճանչնալու հարց չէ ներկայացուած ինձի», յայտարարեց Վարդան Օսկանեան:

Նի Եորքի հանդիպումին ընթացքին Օսկանեան եւ Ապտալլա Կիլի անդրադարձած են Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հեռանկարներուն՝ Արցախի մէջ նախագահական ընտրութիւններուն եւ անոր հաւանական արդիւնքներուն յոյսին տակ: Ըստ Օսկանեանի, տակաւին կարելի չէ հաստատել, որ Լեռնային Ղարաբաղի հարցը դուրս բերուած է հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման օրակարգէն:

### «ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

Տը եւ տիկին Յաիտ Է. Լուրի Թերթիմանեաններու մանչ զաւակով մը ԱՐԵԳ-ՅԱԿՈՒԲ բախտաւորուելուն ուրախ առիթով,  
Տը եւ տիկին Յակոբ եւ Անահիտ Թերթիմանեաններ 25,000 Լ.ն.

Տոքթ. Բաֆֆի Էլմաճեանի ընդ թախն Նազարեանի ամուսնութեան առիթով,  
Ալլըզեան ընտանիք 20,000 Լ.ն.

### ՍՐԲՈՅ ԹԱՐԳԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ

ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ  
ԵՒ ՎԵՐԱՄՈՒՏ ԴՊՐԵՎԱՆՔԻ

Յառաջիկայ Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003ին, Սրբոց Թարգմանչաց Կարդապետաց տօնին եւ Դպրեվանքի 74րդ (2003-2004) կրթական տարեշրջանի բացման առիթով, հանդիսաւոր սուրբ պատարագ պիտի մատուցուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզ՝  
**ՇՈՂԵ. Տ. ՊԱՐԹԵՒ ԿԻԼԻԿՍԵԱՆ**  
(Տեսուչ Դպրեվանքի)

Եկեղեցական արարողութեան եւ Դպրեվանքի կրթական տարեշրջանի բացման հանդիսութեան պիտի հանդիսապետուի Ս. Արոտոյս Վեհափառ Հայրապետ՝

**Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Պատարագէն ետք, Վեհարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ Դպրեվանքի 74րդ կրթական տարեշրջանի պաշտօնական բացման հանդիսութիւնը: Առ այդ, Վեհափառ Հայրապետը իր հայրական պատգամը եւ օրհնութիւնը պիտի փոխանցէ Դպրեվանքի սաներուն եւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին:

Սիրով կը հրաւիրուին մեր ժողովուրդի հաւատացեալ զաւակները, սուրբ պատարագի ընդմէջէն հաղորդուելու Սրբոց Թարգմանչաց խորհուրդով, ինչպէս նաեւ ներկայ ըլլալու Դպրեվանքի բացման հանդիսութեան:

Դպրեվանքի մեր նախկին թէ մոր բոլոր սաներուն ուշադրութեան կ'ուղղուի յայնչեմ, թէ առաւելագոյնը մինչեւ Հինգշաբթի, 9 Հոկտեմբեր 2003ին, պարտին իրենց ծնողներուն կամ ընտանեկան պարագաներուն հետ Դպրեվանք (Պրեֆայա) բարձրանալ եւ Տեսչութեան ներկայանալ:

ՏԵՄՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՔԻՑ

### Հ.Մ.Բ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՆՆԱԾԻՎ KUNG FUH ԴԱՍԸՆԹԱՅԸ

Հ.Մ.Բ.Մ. Անթիլիասի մասնաճիւղ, հաճոյք ունի յայտարարելու, թէ սկսած է KUNG FUH դասընթացներու, մասնաւորաբար պատանդներու համար:

Մարզումները կը սկսին Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003ին, ժամը 2:00տն սկսեալ, Արաւելեան Հ.Մ.Բ.Մ. մարզադպրոցային համալիրին մէջ:

Մասնակցի փափաքողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն, 04 - 722903 եւ 03 - 384020, կամ անձամբ ներկայանալ համալիր, Զաբաթ, 12 Հոկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 1:30տն սկսեալ:

### ՄԱՀԱԶԳ

Տիկին Լուսին Թրթեան  
Տէր եւ տիկին Մովսէս Թրթեան  
Տէր եւ տիկին Ժան Թրթեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Սողոմոն Խորեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ժողէֆ Թրթեան եւ զաւակունք  
Թրթեան ընտանիք  
Գիւլաղպեան ընտանիք  
Ճղըլեան ընտանիք  
Հաջագործեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գոհեն իրենց ամուսնոյն,  
հօր, եղբոր եւ հարազատին՝

### Lebanese Armenian Technical College L.A.T.C. ԵՍՏՅՈՒՆ ԳՈՒՆԸ

**TECHNICAL BACCALAUREATE  
BT, BT1, BT2, BT3**

1. Accounting and Computer Services  
2. Administrative and Office Services

Արձանագրութիւնները կը շարունակուին ամեն օր, կէսօրէ ետք ժամը 3:00տն 9:00ը:

Վերանուտ՝ 13 Հոկտեմբեր 2003

### ԹԱՐԳԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Նախագահութեամբ՝  
**Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**  
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի հայոց թեմի)

Կազմակերպութեամբ՝  
**ԱԶԳ. ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻ  
ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Յ. Տը Մելքոնեան» հանդիսաւարանին մէջ:

ՇՐԱԲԵՐ

**2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԻ ՏԱՐԻ**

**ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԸ՝ ԲՈՒՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՄՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ, ՍՈՒՐԷՆ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, ԱՌԻԹԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՉ» ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԿՐԹԱԿՈՒՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ**





ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԱՆԳԱՄԸ ԿԸ ԶԱՅՐԱՆԱՅ ՀԱՅ-ԹՐԹԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ՅՈՒՆԱՍՍԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՔՈՍԹԱՍ ՔԱՐԱՄԱՆԼԻՍԻ ՀԵՏ

Ամերիկայի Հայ Դատի Ցանձնախումբը վերջերս հաղորդեց, թե Ներկայացուցիչները Տան Միջազգային յարաբերություններում Եւրոպայի ենթախումբում և Երևանում իր նիստին ընթացքին քննարկած է «Թուրքիոյ ապագայի ուղղութիւնը» եւ թուրքամերիկեան յարաբերութիւնները»

Յանձնախումբը հաղորդեց, թե քննարկումին ընթացքին խօսուած է նաեւ Հայ-թրքական յարաբերութիւններուն մասին: Արդարեւ, «Հիւրերի-յթ» օրաթերթի խմբագիր Էրիկ Միլլերը ընթացքին Ներկայացուցիչներու Տան անդամ Քոստաս Մըքքոթըրը անկէ պահանջած է նկարագրել Հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ իրա-

վիճակը: Իբրեւ պատասխան, Էրիկին էջ մը կարդացած է Հայկական Յեղասպանութիւնը ուրացող թրքական պետական աշխատութեան շրջանցելով Յեղասպանութիւնը եւ փոխարէնը քաջալերելով «պատմական իրողութիւնները» քննող պատմաբաններու յանձնախումբի մը կազմութիւնը: Հայկական Յեղասպանութիւնը նկարագրելով իբրեւ «հոգեբանական խոչընդոտ», Էրիկին դիտել տուած է, թե Հայաստանի քայլերն են, որ ապագային պիտի ձեւաւորեն Հայ-թրքական յարաբերութիւնները: «Ես կը կարծեմ, որ անոնք (Հայերը «Ա») երկու ընտրանք ունին: Կա՞մ թուրքիոյ հետ լաւ յարաբերութիւններ կը մշակեն, ապագային կը նային եւ Հայաստանի ապագան պատմութեան ըեւին գերին ըլլալէ կը դադրի, կամ ալ կրնան շարունակել Յեղասպանութեան պնդումները, եւ այդպիսով Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ սահմանը միշտ յարուածութեան սահմանը կ'ըլլայ: Սակայն ես կը կարծեմ, որ թե՛ այդպիսի յանձնախումբը միտնողներ, կարելի կ'ըլլայ յարթացնել Հայ-



Կոնցրեսներու միջեւ Յունիստի տեղի ունեցած Հայ-թրքական յարաբերութիւններուն: Այնուհետեւ Ներկայացուցիչներու Ազգայնական կարելիութիւն տուած է Հայաստանի նկարագրելով թուրքիոյ մերձեցման քաղաքականութեան վրայ վերջին քանի մը տարիներու ընթացքը:

Անդրադառնալով Մըքքոթըրի հարցադրումներուն՝ Հայ Դատի Ցանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան շնորհակալութիւն յայտնած է Ներկայացուցիչներու Տան անդամ Մըքքոթըրը մասնակիցներուն պատասխանէն զայնքան զարց տուած է: «Պարզապէս յստակացնելու համար, թե՛ ճիշդ հասկնալ, իրավիճակը այն է, թե՛ թուրքիա կրաւորական մասնակից մըն է Հայաստանի հետ իր յարաբերութիւններուն յայտնած է, թե՛ թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ երկխօսութեան կարելիութիւնը ունէր անհատականութիւնը կայ, ակնարկելով թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան դիւանագէտ Թեքմէնի եւ կարգ մը ամերիկահայ կազմակեր-

Յունահայ պատուիրակութիւն մը, ընդհանրապէս Ազգային վարչութեան ատենապետ տըքթ. Արմէն Տէրեանէն, Ազգային վարչութեան ատենադպիր Գեղամ Եղաճեանէ, Հ. Յ. Դ. Ցունաստանի Հայ Դատի Ցանձնախումբի ատենապետ Արաքսի Արէլեանէ եւ Յունաստանի Հայոց թեմի առաջնորդ Սահակ արք. Ալվազեանէ, վերջերս տեսակցութիւն մը ունեցաւ Նոր Հանրապետութիւն կուսակցութեան նախագահ Քոսթաս Քարամանլիսի հետ, կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ: Տեսակցութեան ներկայ էր նաեւ կուսակցութեան պաշտօնական բանբեր Թէոտորիս Ռուսոփուլոս:

Սիրալիլ ու մտերիմ ընդունելութեան ընթացքին Ք. Քարամանլիս առաջին հերթին իր հետաքրքրութիւնը յայտնեց յունահայ զարգութի կառոյցներուն ու գործունէութեան մասին, որոնց արդէն ռաւական լաւատեղեակ է: Նոյնպէս յատուկ ուշադրութիւն ցուցաբերեց Հայաստանի իրավիճակին եւ Արցախի հարցի լուծման ուղղութեամբ: Հայկական կողմը, անհրաժեշտ քայլերու իրականացումը տայէ ետք, իր կարգին յունահայութեան գոհունակութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնեց Յունաստանի մէջ ընձեռուած կարելիութիւններուն նկատմամբ, որոնք շնորհիւ յունահայ զարգութիւնը աշխուժ ու ինքնարաւ է:

Ինչ կը վերաբերի Հայ Դատին եւ յատկապէս Եւրոպական խորհրդարանի մէջ տարուած աշխատանքներուն, պատուիրակութիւնը իր շնորհակալութիւնը յայտնեց Ք. Քարամանլիսին իր կուսակցութեան ցուցաբերած դրական դիրքորոշման համար, մինչ ինք վստահեցուց, թե՛ Նոր Հանրապետութիւն կուսակցութիւնը պիտի շարունակէ իր անվերապահ ըրողական ակնկալութիւնը ցուցաբերել յունահայ զարգութիւն նկատմամբ, ինչպէս նաեւ պիտի շարունակէ գործադիր կանգնել Հայութեան ազգային դատին՝ ճշմարտութեան, սկզբունքներու եւ արժէքներու հիման վրայ՝ անշուշտ նկատի ունենալով յայն-թրքական յարաբերութիւնները եւ Յունաստանի չահերը:

Այցելութիւնը վերջ գտաւ փոխադարձ մաղթանքներով եւ յարաբերութիւնները շարունակելու երկկողմանի պատրաստակամութեամբ:

ՀԱՅՎԱԿԱՆ ԳՆԱՊԱՍՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԻ

ՔՈՆԿՐԷՍԱԿԱՆ ՆԵՐ ԷՆՏՐԻԻԶ ԵՒ ՊԻԼԻՐԱՔԻՍ ՔՈՒԷՄԻԿՈՒԹԵԱՆ ՆԻՍՏ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ

Ամերիկայի Հայ Դատի Ցանձնախումբը վերջերս հաղորդեց, թե Ներկայացուցիչներու Տան անդամներ Ռոպէյնտիւրից եւ Մայքըլ Պիլիբաքիս նամակով մը Ներկայացուցիչներու Տան ղեկավարութեան պահանջած են, որ Հայկական Յեղասպանութեան բանաձեւը (H. Res-193) քուէարկութեան դնեն:

Քոնկրէսականները այս պահանջը կատարած են այն հիմնաւորումով, որ Միացեալ Նահանգներ անցեալից ցեղասպանութիւնները ճանչնալու բարոյական պարտաւորութեան տակ են եւ միեւնոյն ժամանակ հիմնական դեր ունին խաղալիք՝ նոր ցեղասպանութիւններ կանխելու իմաստով:

Ներկայացուցիչներու Տան մեծամասնութեան ղեկավար Թոմ Տիլլէյս յղուած իրենց նամակին մէջ էնտրիւզ եւ Պիլիբաքիս գրած են. «Կենսական է, որ մենք անցեալի բոլոր ցեղասպանութիւնները, ներառեալ Ողջակողմը, ճանչնանք Յեղասպանութիւնը եւ Քամպոտիոյ ու Ռուանտայի մէջ տեղի ունեցած ցեղասպանութիւնները, ճանչնանք իրենց ցեղասպանութեանց յստակ պարագաներ, որպէսզի միանգամընդմիջ յստակ ըլլայ, որ ցեղասպանական ոչ մէկ արարք հանդուրժելի է»: Անոնք շարունակած են՝ ըսելով, որ «յատկապէս մերօրեայ աշխարհին մէջ բացարձակ հրամայական է, որ Ամերիկա ու ժողովրդները դրսեւորէ բոլոր ահաբեկչական արարքներուն եւ զանգուածային սպանութեանց դէմ»:

Ցանձնախումբի Ուաշինկթընի զբոսնականի վարչատնօրէն Արամ Համբարեան այս ուղղութեամբ յայտարարեց, թե Յեղասպանութեան բանաձեւին զօրակցողները Նիւ Ճըրզի, Ֆլորիտայի եւ ամբողջ երկրին մէջ կը դնահատեն բոնկրէսականներ էնտրիւզի եւ Պիլիբաքիսի այս նախաձեռնութիւնը: Ան աւելցուց, որ բանաձեւը երկու կուսակցութիւններէն (Հանրապետական եւ Դեմոկրատ) լայն զօրակցութիւն կը վայելէ եւ Ներկայացուցիչներու Տան ղեկավարութիւնը պէտք է գայն քուէարկութեան դնէ:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ  
«Ազգակ»ի մէջ ազգային կամ առնչութեամբ ծանուցումներ հրատարակել փափակուցնելու կը խնդրուի ծանուցումին բնագիրը քննարկելու գիրով (հաստատութեան պարագային)՝ Գաղտնի պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատում)՝ Գաղտնիքը: «Ազգակ»ի ծանուցումները գրասենյակը:

www.hamazkayin.com

ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱՆ ԱՌՈՎ ՊԱՔՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԿՆՆԱԿԱՆ ՅԱՐԱՎԱԿՈՒՄԸ

Չաշխատ երիտասարդներ պղծած են Պաքու: Ի մէջ Ա. Համաշխարհային Պատերազմին զոհուած ըրիտանացի զինուորներու յուշարձանը: Բարբարոսները պենդին թափած են յուշակոթողին վրայ: Որոշ տուեալներու համաձայն, անոնք փորձած են այրել յուշարձանը, սակայն չեն յաջողած: Անգլիացիները արգելադրեցին յուշակոթողին վրայ: Որոշ տուեալներու համաձայն, անոնք փորձած են այրել յուշարձանը, սակայն չեն յաջողած: Անգլիացիները արգելադրեցին յուշակոթողին վրայ: Որոշ տուեալներու համաձայն, անոնք փորձած են այրել յուշարձանը, սակայն չեն յաջողած:

Բրիտանացի զինուորականները անտարբեր չէին մնացած Պաքուի իշխանութիւնը ստանձնած մուսուլմանական կազմակերպութիւններուն նկատմամբ: Անոնք պաշտպանած էին տեղացի հայերը, այսպէս կոչուած «Կոփլիսներ» իսլամական բանակ՝ խմբաբազմ յարձակումներէն: Այդ խմբաբազմի յարձակումներուն զոհ գացած էին բրիտանացի զինուորներ: Զօր. Տեսութեան վրայ հրամանատարութեամբ Պաքու հասած հազար զինուորներէն 47ը սպանուած էին, երբ թրքական բանակը մտած է քաղաք, եւ երբ անգլիացիները համոզուած են, որ չեն կրնար դիմադրել յարձակումներուն, զօրավարը իր ուսումնականներուն հրամայած է հեռանալ Պաքուի նահանգի իստի: Ասկի անմիջապէս ետք սկսած է

Պաքուի հայերու գտնուածային կոտորածը: Յուշակոթողը, որուն վրայ փորագրուած են ազգայնականներուն կողմէ սպաննուած 47 բրիտանացիներուն անունները, կանգնեցուած էր քանի մը օր առաջ: Անոր բացումը նախատեսուած էր 24 Սեպտեմբերին՝ տիրահրաշակ իրադարձութիւններու 85րդ տարեդարձին: Յուշակոթողի բացման մասնակցելու համար Պաքու պիտի գային Բրիտանիոյ թագաւորական ընտանիքի անդամ Քեթլին Էնգլընը եւ բրիտանական զինուորական յուշակոթողը: Պաքուի հայերը արգելադրեցին յուշակոթողին վրայ: Որոշ տուեալներու համաձայն, անոնք փորձած են այրել յուշարձանը, սակայն չեն յաջողած: Անգլիացիները արգելադրեցին յուշակոթողին վրայ: Որոշ տուեալներու համաձայն, անոնք փորձած են այրել յուշարձանը, սակայն չեն յաջողած:

պատճառները հասկնալի են բոլորին համար: Ազգայնականներու հաւաքներուն ընթացքին կատարուած յայտարարութիւններէն ետք բրիտանական ղեկավարութիւնը բաւարար հիմք ունէր անհատականութեան թագաւորական ընտանիքի ապահովութեան համար: Այցելութիւնը յետագային ծրագրուած էր շեքուրդի որոշումը ողջունելով՝ Պաքուի «Ջերբալ» թերթը գրեց: «Կարծես թե՛ անգլիացիները ըմբռնեցին յուշակոթողի դէմ ուղղուած հասարակութեան պատգամը»: Այսուհանդերձ, հակառակ յետագայ գտնումին, կոթողը պղծուեցաւ: Դժուար չէ պարզել, թե՛ ո՞վ կազմակերպած է բարբարոսական արարքը: Երբեք անգլիացիները չեն կարողանալու իրենց անգլիացիներուն նուիրուած յուշակոթողին հաստատման դէմ՝ գանոնք մեղադրելով Հայերը պաշտպանելու յանցանքով: Այս կացութեան դիմաց, բրիտանական կողմը որոշած է Ռիսթի չլիմել եւ յետագային Պաքու այցելուելու: Պաշտպանական յայտարարութիւններուն մէջ կ'ըսուի, թե՛ «այցելուելու յետագային Հայերը պաշտպանելու արտաքին հետ համաձայնարար», եւ կը հաստատուի, թե՛ անկողնակապուտ չէ ազգայնականներու բռնարարներուն: Սակայն իրական

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ» ԳԻՐՔԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հազարաւոր թուրքեր Պեյճիք - Հոլանտա սահմանին մօտ Հասկիթ-Նրենգուր քաղաքին սրահներուն մէջ զիրար կ'ողջունեն Գորշ Գայլի յատուկ բարեւ տալով: Մարդիկ կ'առեւանգուին, կեղծ դրամի առեւտուր տեղի կ'ունենայ, ոչ ոք առանց զէնքի փողոց դուրս կու գայ: Թմբեցուցիչի առեւտուրը առկայ է: Կատարեալ հնազանդութիւն կը բարոկոզի թուրք ղեկավարներուն նկատմամբ: Սփլիթները ապօրինի ձեռով երկիր մուտք դրոժողներու ապաստանարան կը դառնան: Թափանցումներ տեղի կ'ունենան Հոլանտական քաղաքական կուսակցութիւններու մէջ:

Այս բոլորը մաս կը կազմեն Գորշ Գայլերուն մասին հետաքրքրաշարժ հետազոտութեան մը, որուն նախաձեռնած է լրագրողական երկեակ մը՝ Սթեյլա Պրահմ եւ Մեհմէթ Իւլթէր: Թուրք ծայրայեղ աջակողմեաններու մասին «Գորշ Գայլեր» գիրքը Հոլանտայի մէջ լոյս տեսած է 1997ին եւ այնուհետեւ ունեցած է երկու լրահրատարակութիւն:

Գիրքը մեծ աղմուկ բարձրացուցած է: Հեղինակները հետապնդուած են նոյնիսկ մահուան սպառնալիքներով: Անոնք նոյնիսկ ստիպուած եղած են թաքնուել, երբ Հոլանտական իշխանութիւնները մերժած են երաշխաւորել անոնց ապահովութիւնը: Այսուհանդերձ աշխատութիւնը արժանացաւ լրատուամիջոցներու եւ քննադատներու դրական վերաբերմունքին:

Վերջերս Հայաստանի գրողներու միութեան տան մէջ տեղի ունեցաւ գիրքի հայերէն թարգմանութեան շնորհահանդէս՝ հեղինակներու եւ թարգմանիչ Արսէն Նազարեանի մասնակցութեամբ: Ծննդահայրենի Պաքուի յայտնելով գիրքի հայերէն թարգմանութեան համար Մեհմէթ Իւլթէրը նշեց, որ դարասկիզբին թուրքիա մեծ տառապանք պատճառած է Հայ ժողովուրդին: Ան նշեց, որ գիրքին մէջ անդրադարձ կայ Հայերու ջարդարներուն մասին, եւ յառաջիկային ինք եւ Պրահմ կ'ընթացեն աշխատութիւն մը հրատարակել այդ նիւթին շուրջ: Ըստ Իւլթէրի, «Գորշ Գայլեր» գիրքը հակաթուրք բնույթի կրէ: «Եւրոպան եւ մարդկութիւնը մեծ վտանգ կը դիմազորուեն: Գորշ Գայլերը կազմակերպութիւնը հզօր ազդեցութիւն կը վերածուի, Հոլանտայի եւ այլ երկիրներու մէջ վերածուած են մեծ կազմակերպութիւններու, որոնք իրենց կամբը կը թելադրեն իշխանութիւններուն: Երբեք իրենց կողմէ իրենց ճանաչման չփակուի, վաղը կ'ընայ ուշ ըլլալը», շեշտած է թուրք մտաւորականը աւելցնելով, որ Գորշ Գայլերը վտանգաւոր են նաեւ Եւրոպայի հայկական կազմակերպութիւններուն համար եւ կը կազմակերպեն հակահայ արարքներ: Իր կարգին, Սթեյլա Պրահմ նշած է, թե՛ որքան ալ հզօր ըլլան Գորշ Գայլերը, աշխատանք պիտի տարուի, որ Հոլանտայի կառավարութիւնը ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը:

«ԱՐՄԵՆՓՐԷՍ»



# ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

Ա. Շ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԿԸ ԶՊՈՒՇԱՅՆԷ ԿԻՆԵՐԸ

## ՄՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՇԱՏ ԱԻՆԵԼԻ ՄԵԾ ԹԻՒՈՎ ԿԻՆԵՐ ԿԸ ՍՊԱՆՆԷ, ՔԱՆ ՔԱՂՅԿԵՂԸ

Առողջապահության նախարար Վահագնյանի կողմից կատարված զննարկում (ԱՀԿ) Սեպտեմբերի վերջերս կոչ ուղղած է կիններուն՝ առեւթույնով հոգ տանելու իրենց սրտերուն, զգուշացնելով, որ սրտանոթային հիվանդությունները, սրտի տաքանալները եւ կաթնաձեռնի տարեկան շատ անկի մեծ թիվով կիրք կը սպանեն, քան՝ կուրծքի քաղցկեղը:

